ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՍՊ-ԳՀԾՁԲ-19/16» - 152-19

ք. Երևան «08» 04 2019 թ.

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Վահե Էլոյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Տիգրան Բալդրյան Արայի>>Ա/Ձ -ն (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Սպորտային միջոցառումների կազմակերպում/** « Տարեցների հանրապետական խաղերի անցկացում» միջոցառման կազմակերպման և անցկացման» ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը

տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 986000 (ինը հարյուր ութսունվեց հազար) ՀՀ դրամ :

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից

ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[2]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[3]:

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[4]:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի

---

[2] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[3] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[4] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է

www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ___ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	Տիգրան Բալդրյան Արայի Ա/Ձ
ք. Երևան, Աբովյան 9	Հասցե՝ Ք.Երևան Բաբաջանյան փ /Շ/4/34
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ 900011010957	Հ/Հ 15100441064400100
ՀՎՀՀ 02586282	ՀՎՀՀ 83812178
Գլխավոր քարտուղար Վ. Էլոյան	Տնօրեն Տ.Բալդրյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«08» 04 20 թ. կնքված
«ՍՊ-ԳՀԾՁԲ-19/16-152-79» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	92621110/9	**Տարեցների հանրապետական խաղերի անցկացում** Ծրագրի նպատակն է՝ տարեց բնակչության առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում, տեղերում բնակչության ակտիվ հանգստի կազմակերպում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզում: Տարեցների հանրապետական խաղերի ծառայությունը մատուցվում է երկու փուլերով՝ **մարզային և հանրապետական**: **Մարզային փուլը** անցկացվելու է 2019 թվականի օգոստոսի 10-ից- 20-ը, ՀՀ 10 մարզերում, Երևան քաղաքում և Արցախի Հանրապետությունում: ՀՀ մարզերում, Երևան քաղաքում և Արցախի Հանրապետությունում խաղերը կազմակերպելու և անցկացնելու համար մասնակիցը պարտավոր է նախատեսնված վկայագրերը (հավաստագրերը) հասցնել ՀՀ մարզկենտրոններ օգոստոսի 10-20-ը ընկած ժամանակահատվածում (համաձայն ՄՍՖԴՔ վարչության կողմից ներկայացված ժամանակացույցի) և տեղերում կազմակերպել մրցանակակիրների պարգևատրման արարողությունը: Տարեցների հանրապետական խաղերի **հանրապետական փուլը** կազմակերպվելու և անցկացվելու է 2019 թվականի սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 1-ը, Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքում: Մասնակիցը պարտավոր է որևե մարզահամալիրում ապահովել շախմատ, շաշկի, նարդի և դարթս մարզաձևերի մրցումների կազմակերպման համար համապատասխան մարզասրահներ, կահավորել համապատասխան մարզագույքով՝ շախմատի և շաշկու լրակազմով, նարդիներով, բասկետբոլի գնդակներով և դարթսով, կազմակերպել բժշկական օգնության և սպասարկման շուրջօրյա ծառայություն (3 օր): Մասնակիցը Խաղերի փակման հանդիսավոր արարողությունը կազմակերպելու, մրցանակակիրների պարգևատրությունը կազմակերպելու համար պետք է հոկտեմբերի 1-ին տրամադրի մարզադահլիճ ձևավորված ՀՀ դրոշներով, մրցման խորհրդանիշ պաստառներով, (տեքստը և արտաքին տեսքը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ), միաժամանակ պարտավոր է ապահովել համապատասխան հաղորդավարի ծառայություն, ռադիո տեխնիկա-	դրամ	986000	1	**ՀՀ 10 մարզերում, Երևան քաղաքում և Արցախի Հանրապետությունում:** **ք. Ծաղկաձոր**	**10.08.2019թ-01.10.2019 թ.** **Մարզային փուլը** **10.08-20.08-2019ը** **Հանրապետական փուլը** **10.09-01.10.2019թ**

		բարձրախոսներով, պատվանդան մրցումների ավարտից հետո մրցանակակիրների պարգևատրման արարողությունը կազմակերպելու համար: Խաղերի հանրապետական փուլին կմասնակցեն ՀՀ 10 մարզերի, Երևան քաղաքում և Արցախի Հանրապետության հավաքական թիմերը, թվով 120 մարզիկ-մարզուհի և 12 ներկայացուցիչ: ***Խաղերի մարզային և հանրապետական փուլերի անցկացման համար անհրաժեշտ է հետևյալ մարզագույքը և պարագաները՝ 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված մարզերին պարգևատրելու համար*** **Վկայագրեր (հավաստագրեր, շնորհակալագիր)**՝ խտությունը՝ 220-260 գ/քմ, չափսը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ: Հավաստագրերի տեսքը և տեքստերը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ, կից ներկայացվում է նաև հավաստագրի ձևը: Մարզային փուլի համար՝ 30 հատ x 12 մարզ = 360 հատ. Հանրապետական փուլի համար՝ 33 հատ. Շնորկակալագիր՝ 10 հատ. **403 հատ** **Վկայագիրի համար** գրպանիկով թղթապանակներ (Շնորհակալագիր, հավաստագիր) չափսը՝ 32 x 22 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220գ/քմ: Տեքստը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ՝ Հանրապետական փուլի համար՝ **13 հատ** **Հուշանվեր (գավաթներ)** 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված թիմերի 3 հատ. ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով, նմանտիպ, պատվանդանի տեքստը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ՝ 1-ին տեղ՝ 65 սմ բարձրությամբ, **1 հատ** 2-րդ տեղ՝ 60 սմ բարձրությամբ, **1 հատ** 3-րդ տեղ՝ 55 սմ բարձրությամբ, **1 հատ** ***Տարեցների հանրապետական խաղերի եզրափակիչ փուլի կազմակերպման համար, անհրաժեշտ է հետևյալ մարզագույքը:*** *Մարզագույքի որակը և տեսքը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ՝ մրցումներից 3 օր առաջ.* - **Շաշկի՝** **12 լրակազմ.** - **Շախմատ՝** **10 լրակազմ.** - **Դարթս՝** **2 հատ.** - **Բասկետբոլի գնդակ** **4 հատ.** - **Մրցավարների համար մայկա՝** **16 հատ.**					

		- Մրցավարների համար գլխարկ՝ 16 հատ. **- Հուշանվեր՝** ամենատարեց մասնակիցներին (տղամարդ, կին)՝ **2 հատ.** **- Մեդալներ. 30 հատ** **Շաշկի՝** պատրաստված փայտյա կամ պլաստմասսե հումքից, նախատեսված երկգույն 64-վանդակներով տառանշված և թվանշված մրցումային ստանդարտներին համապատասխան: Փայտյա կամ պլաստմասսե հումքից շաշկու կլոր քարեր, 2 գույնի, 12-ական հատ: Մրցումային և մարզումային ստանդարտներին համապատասխան: **Շախմատ՝** պատրաստված փայտյա կամ պլաստմասսե հումքից, նախատեսված երկգույն 64-վանդակներով տառանշված և թվանշված մրցումային ստանդարտներին համապատասխան: Փայտյա կամ պլաստմասսե հումքից շախմատի քարեր, 2 գույնի (16-ական հատ), մրցումային և մարզումային ստանդարտներին համապատասխան: **Գնդակ բասկետբոլի,՝** կաշվե հումքից N 5-6 չափի (75-75.88սմ շրջանագիծ), քաշը 567-650 գրամ, 12 կտորից (պանել), երկու գույնանի, բացօդյա և փակ դահլիճներում օգտագործելու համար: **Դարթս՝** պատրաստված է խտացված բուսական մազաթելերից կամ խտացված բամբակից, թիրախը բաժանված է հատվածների, որոնց վրա գրանցված են 1-ից 20 թվերը, նետի ծայրամասը պատրաստված է մետաղե ասեղից, իրանը՝ պլաստմասսայից: **Մրցավարներին՝ շապիկ և գլխարկ՝** բամբակյա, կլոր վզով, կիսաթև, ուսից մինչև թևքի եզրը ձգվող զոլերով և ամառային գլխարկ, (հանձնվում է անհատույց, սեփականության իրավունքով): Տեսքը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ: **Մեդալներ**. չափսը՝ 5 սմ տրամագծով x 3 մմ հաստությամբ, մետաղե ձուլվածք, եռագույն ժապավենով՝ 0.80 սմ երկարությամբ, սինթետիկ հումքից: **Հուշանվեր՝** հանրապետական փուլի մրցումներին ամենատարեց մասնակիցներին (1 տղամարդ, 1 կին), հանձնելու համար: Մարզական կոստյում՝ տաբատ և բաճկոն՝ մարզումների ու մրցումների համար: Չափսերը 46-ից-54 համարի: 100% պոլիեստեր, կոստյումի բաճկոնը շղթայով բացվող: Համազգեստի գունային գամման և չափսը համաձայնեցնելով ՄՍՖԴՔՎ հետ:					

		Մրցույթի համար նախատեսված են՝ **Հաղորդավարի ծառայություն.** **1 օր** ***Ռադիոհանգույց՝*** բարձրախոս 7 կվ հզորությամբ, 2 բարձրախոս առանց լարի, 1-ը լարով, միկշերային վահանակ **1 օր** **Մարզադահլիճի վարձակալում՝** (ձևավորում-ապամոնտաժում) Ծաղկաձոր քաղաքում: Մարզադահլիճների ձևավորում դրոշակներով և պաստառներով զարդարված, պարգևատրման արարողությունը կազմակերպելու համար պատվանդանի առկայություն: Մարզադահլիճի կահավորման տեսքը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ՝ **2 օր** **Շտապ բուժօգնության ծառայության ապահովում** մասնակիցների և մրցավարների համար: **3 օր** **Գովազդային նյութերի** պատրաստում (ֆոտո, տեսաֆիլմերի, նկարահանում) *մրցման օրը.* **1օր** **Գովազդային պաստառների պատրաստում** (բաներ՝ 5 մետր երկարություն 2 մետր լայնություն) տեսքը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ՝ **1 հատ** . **Հրավառություն՝** միջոցառման ավարտին ճայթռուկ ծառայության մատուցում, մարզադահլիճում: **6 հատ** **Տրանսպորտային միջոց՝** մարզագույքը տեղափոխելու համար (Երևան-Ծաղկաձոր-Երևան: **2 օր** **Մարզական խաղերի ժամանակ մրցավարական հանձնաժողովի աշխատանքները կազմակերպելու համար անհրաժեշտ գրենական պարագաները** - Թղթե արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210 x 297մմ) ձևաչափի թերթերի համար, **5 հատ** - Ժապավեն-կպչուն պոլիեթիլային ժապավեն (սկոչ) 48 մմ x 100 մ չափսի, **1 հատ** - Թղթե կպչուն ժապավեն՝ 48 մմ x 100 մ, տնտեսական, մեծ, գլան-փաթաթված ժապավեն 48 մմ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 100 մ, **5 հատ**					

		Հաշվիչ (կալկուլյատոր) «CITIZEN» կամ համարժեք։ **հատ** Թուղթ A4 չափսի1 (21 x 29.7), չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված 80 գ/մ² (210 x 297) մմ, **2 հատ** - Ծրար A5 ձևաչափի: Ծրարներ չթափանցող, եռանկյունաչափ փակվող, խիտ թղթից `նախատեսված գաղտնիություն պարունակող նամակների համար՝ սահմանված չափի և ձևի: **50 հատ** - Թղթապանակ (ռեգիստրատոր)՝ 2 օղակով, պլաստիկ, լայնությունը՝ 80 մմ, A4 չափսի, **10 հատ** - Գելային-գրիչ, 0,5 մմ ծայրով, տարբեր գույների, (գել), **2 հատ** - Գրիչ գնդիկավոր. Տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքներով, մեծ և փոքր չափսերի, **10 հատ** - Մատիտ, գրաֆիտե միջուկով, հասարակ, սև, համապատասխան կարծրությամբ, **12 հատ** Յուրաքանչյուր գավաթի պատվանդանի վրա գրվում է՝ **«Տարեցների հանրապետական խաղեր»** և նշվում զբաղեցրած տեղը: Տեքստը պետք է համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ:					

Վերոհիշյալ մրցույթն անցկացվում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 21-ը հունվարի 2019 թ. N 11-Ա/1 հրամանով հաստատված «Տարեցների հանրապետական խաղերի» անցկացման 2019 թվականի կանոնակարգի պահանջների համաձայն:

*** Միջոցառման անցկացման համար Կատարողը՝ 2-րդ փուլի անհրաժեշտ հավաստագրերը հասցնում մրցավայրեր՝ ՀՀ 10 մարզկենտրոններ, Երևանի քաղաքապետարան և Արցախի հանրապետություն: Եզրափակիչ փուլում Կատարողը մարզագույքը հասցնում է մրցավայր ք. Ծաղկաձոր: Կատարողը իրականացնում է բոլոր կազմակերպչական, մարզադաշտի և դահլիճների ձևավորման աշխատանքները, իսկ միջոցառման ավարտից անմիջապես հետո գույքը հասցնում է պահեստավորման վայր՝ համաձայնեցնելով մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության քաղաքականության վարչության հետ: Վարչության կողմից կատարողին տրացուցիչ տրամադրվող պարգևատրման ցանկի համապատասխան, տեղում կազմակերպում է պարգևատրումը, կազմում է մրցանակների և գույքի բաշխման ցուցակները, որոնք հետագայում դառում են ընդունման-հանձնման ակտի անբաժանելի մասը:*

**** Պարտադիր պայման է գույքի չօգտագործված լինելը և համաձայն ժամանակացույցի կատարել ծառայությունները:*
*****Հավաստագրի օրինակելի ձևը կցվում է*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ք. Երևան, Աբովյան 9 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900011010957 ՀՎՀՀ 02586282 Գլխավոր քարտուղար Վ. Էլոյան -------------------------------/ստորագրություն/	Տիգրան Բալոյան Արայի Ա/Ձ Ք. Երևան, Բաբաջանյան փ /Շ/4/34 ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Հ/Հ 1510044106440100 ՀՎՀՀ 83812178 Տնօրեն՝ Տ.Բալոյան -------------------------------(ստորագրություն)

Հավելված N 2
«08» 04 2019 թ. կնքված
ՍՊ-ԳՀԾՁԲ-19/16-152-19 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հազ.ՀՀ դրամ

Ծառայության															
րավ րով ախ ատե ված չափ աբա ժնի համ արը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	92621110/9	« Տարեցների հանրապետական խաղերի անցկացում» միջոցառման կազմակերպման և անցկացման» մարզական միջոցառման անցկացման								986.0	986.0	986.0	986.0	986.0	986.0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011010957

ՀՎՀՀ 02586282

Գլխավոր քարտուղար՝ Վ. Էլոյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Տիգրան Բալդրյան Արայի Ա/Ձ
Ք. Երևան,Բաբաջանյան փ /Շ/4/34

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

Հ/Հ 1510044106440100

ՀՎՀՀ 83812178

Տնօրեն՝ Տ.Բալդրյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
«08» 04 2019 թ. կնքված
«ՍՊ-ԳՀԾՁԲ-19/16» ծածկագրով պայմանագրի
152-13

Պատվիրատու
Հայաստանի Հանրապետության սպորտի
և երիտասարդության հարցերի
նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011010957

ՀՎՀՀ 02586282

Պայմանագրի կողմ
Տիգրան Բալդրյան Արայի Ա/Ձ
Հասցե՝ Ք. Երևան,Բաբաջանյան փ /Շ/4/34

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

Հ/Հ 1510044106440100

ՀՎՀՀ 83812178

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

«08» 04 2019 թ. Հավելված 3.1
«ՍՊ-ԳՀԾՁԲ -19/16»- 152-18 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն